# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Վ.

*Երկրորդ համաշխարհային պատերազմում հայ ժողովուրդն ունեցավ անմիջական մասնակցություն և մարտական արիության բազում օրինակներ տվեց. զորակոչվեց մոտ 440 հազար հայ, որոնցից 250 հազարը՝ Հայաստանից: Պատերազմին իրենց ուղղակի կամ անուղղակի մասնակցությունն են ունեցել նաև Հայաստանի մտավորականները: Մեջբերենք 1942 թվականին Երևանում կազմակերպված ցուցահանդեսի կատալոգում արվեստաբան Ռուբեն Դրամբյանի հեղինակած առաջաբանի հետևյալ միտքը. «Այսօր, պատմական այս ահեղ օրերին մեր երկրի ճակատներում, Անդրկովկասի նախադռների մոտ, երբ մեր Մեծ միության ժողովուրդների հետ միասին Հայաստանի զավակները կռվում են հանուն ազատության, անկախության և մեր ժողովուրդների լուսավոր ապագայի, թիկունքում բոլոր ուժերը ուղղված են ֆրոնտին օգնություն ցույց տալու համար»[1]: Ոչ միայն պատերազմի տարիներին, այլև դրանից շատ տարիներ անց էլ գրեթե միշտ Հայաստանի մտավորականներն անդրադարձել են պատերազմական թեմաներին, ինչպես նաև հանդես են եկել հանուն խաղաղության: Պատերազմական այդ դժվարին տարիներին անգամ հայ արվեստագետները այդ թեմաներով ցուցահանդեսներ են կազմակերպել:*

*Խորհրդային Հայաստանի արվեստագետերն իրենց ստեղծագործական գործունեությամբ նպաստել են թշնամու դեմ մղվող պայքարի ու հաղթանակի ընդհանուր գործին: Հիշատակենք Մարտիրոս Սարյանի «Խորհրդային Միության հերոս Դ. Մարգուլիսի», ինչպես նաև «Ծովակալ Հովհաննես Իսակովի» դիմանկարները: Այս ստեղծագործություններն իրենց կատարելությամբ ցույց են տալիս ոչ միայն նկարչի պատերազմատյացությունը, այլև խրախուսում խաղաղապաշտություն և մարդասիրություն[2]:*

*Հայրենական Մեծ պատերազմի թեմային անդրադարձած հայ նկարիչներից է նաև ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, «Մեսրոպ Մաշտոց», «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանների ասպետ, Երևանի պատվավոր քաղաքացի Էդուարդ*

[1] Գրիգորյան Ս., *Մուսաները չլռեցին, գիրք 1, Ե., 1989, էջ 96:*
[2] *Նույն տեղում, էջ 97:*

*Իսաբեկյանը (ծնվել է 1914 թ. Իգդիրում)[3]: Բազմաժանր ու դրամատիկ պահերով լեցուն են նրա կտավներն ու էսքիզները:*

*Էդ. Իսաբեկյանի արվեստը գաղափարական և կերպարային, ժանրային և թեմատիկ սահմանագծեր չճանաչող լայնահուն, բազմաճյուղ ու բազմաբովանդակ երևույթ է: Թեպետ նկարչին լայն ճանաչում բերած, իր կենդանության օրոք նրան «դասականացրած» գրեթե բոլոր աշխատանքները թեմատիկ հորինվածքներ են՝ ռազմանկարներ, առասպելական, պատմական ու պատմահեղափոխական բովանդակությամբ մեծաչափ, հաճախ բազմաֆիգուր կտավներ, միևնույն ժամանակ նրա ստեղծագործական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են զբաղեցնում նկարչական այլ տեսակների ու ժանրերի պատկանող գործեր՝ կենցաղային առօրյա պատկերներ և բնության տեսարաններ, դիմանկարներ ու նատյուրմորտներ, կանացի մերկ ու կիսամերկ ֆիգուրներ, ձիերի ու ձիավորների կերպարներ, այլաբանական ու փոխաբերական իմաստներ կրող աշխատանքներ, գրական երկերի՝ պատմվեպերի ու պոեմների գրաֆիկական ձևավորումներ[4]:*

*Էդ. Իսաբեկյանի ստեղծագործությունների հարուստ շարքից հատկանշական են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ու դրան հաջորդող կտավներն ու էսքիզները, որոնք մեծավ մասամբ նվիրված են հենց պատերազմական, ռազմական ու հայրենասիրական թեմաներին: Այդ աշխատանքները ամփոփված են հսկայական էներգիայով ու ռիթմով, որոնք սրընթաց առաջանում են դեպի փակ տարածություն, որտեղ կաղր առ կաղր զարգանում են պատերազմական սյուժեները, իսկ դուրս գալու միակ ելքը կյանքի ու ազատության համար մղվող պայքարն է:*

*Ստեղծագործությունների նմանօրինակ զգայական և գրեթե իրական տեսարաններ պատկերելու համար հիմք է հանդիսացել նկարչի անմիջական ներկայությունը ռազմաճակատում: Իսաբեկյանը արյան ու ավերի այդ դաժան օրերին, անտեսելով մահվան վտանգը, մի խումբ արվեստագետների հետ (Նաիրի Զարյան, Սողոմոն Տարոնցի) այցելել է Կերչում կռվող հայ մարտիկներին[5]: Նկարչի այդ օրերը կարող ենք փաստել որպես ստեղծագործա կան զործուղում, որտեղից էլ ծնվել են մի շարք էսքիզներ, գրաֆիկաներ, կտավներ՝ «Ռազմաճակատային ճեպանկար», «Դրոշների հանձնում Հայկական դիվիզիային Կերչում», «Քաղաքի*

---

[3] Աղասյան Ա., *Էդուարդ Իսաբեկյան – 100, հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ, Ե., 2014, էջ 3:*

[4] *Նույն տեղում, էջ 4:*

[5] Գրիգորյան Ս., *նշվ. աշխ., էջ 97:*

*ազատագրումը» ստեղծագործությունները: Այս աշխատանքների գունային լուծումներում շեշտված են կամքը, մարտունակությունը, տոկունությունն ու նվիրումը, ազատության վայելքն ու գիտակցական պայքարի անհրաժեշտությունը: Եվ այս բոլորը վրձնի, գույների և հոգու լեզվով: Աշխատանքները բացահայտում են նկարչի զգայական աշխարհը, ինչպես նաև մարտական ու հայրենասիրական ոգին:*

*Նա մարտիկներին պատկերեց իրենց առօրյա վիճակի մեջ, ճշմարտացի, գերմանական տեխնիկայից, մանավանդ օդում հաճախակի հայտնվող օդանավերից տագնապած: Խունացած թերթերին պահպանվել են մատիտով կատարված այդ ճեպանկարները: Պատերազմական թեմաներով նրա ստեղծագործությունները, իհարկե, փորձում էին ներկայացնել զավթչի ամբարտավանությունը և հայրենի հողը պաշտպանողների հպարտ, աննկուն ոգին: Բայց այդ ամենն ասվում էր ոչ թե մերկապարանոց, պլակատային եղանակով, որ հասկանալի պատճառով տեղ ուներ մեծ տերության նկարիչների ու քանդակագործների արվեստանոցներում, այլ գեղանկարչական մի ուրույն լեզվի միջոցով, որի հյութեղությունը, առանձնահատուկ ճաշակն այսօր էլ զարմացնում և աչք են շոյում[6]:*



***Տանյա, կտավ, յուղաներկ***

[6] Միքայելյան Մ., *Էդվարդ Իսաբեկյան. ալբոմ, Ե., 2004, էջ 12:*

Պատերազմական թեմատիկայով գործերից հատկանշական են «Տանյան» և «Արագի ափին» յուղաներկ կտավները: Դրանցից առաջինի մյուս մշակման մեջ հեղինակը հրաժարվում է նախորդի բեմական պաթետիկ շարժումներից ու ժեստերից (հերոսուհու կերպարն այդտեղ անթաքույց նմանություն ուներ Դելակրուայի՝ ազատությունը խորհրդանշող, ժողովրդին առաջնորդող մերկ կրծքով կնոջ կերպարի հետ), նկարը ծանրաբեռնող և դիտողի ուշադրությունը հիմնական կերպարից շեղող մանրամասներից, գունալուսային անհանգիստ խաղերից ու տպավորիչ էֆեկտներից և արտահայտչական սուղ ու լակոնիկ միջոցներով պատկերին հաղորդում է առավել հավաք, ամբողջական տեսք, պլաստիկական շոշափելի ձև և ողբերգական շունչ: Կախաղանի տակ, կառափնա-բանի վրա անսասան կանգնած Տանյայի հպարտ, լուսավոր կերպարը դառնում է նկարի կոմպոզիցիոն և իմաստային հանգույցը, որն անմիջապես իրեն է ձգում մեր ուշադրությունը՝ հակադրվելով զինվորական գորշ համազգեստներով դահիճներին: Հուզական և հոգեբանական ազդեցությամբ, արտաքնապես զուսպ, սակայն ներքուստ լարված դրամատիզմով, հերոսական ու եղերերգական խրոխտ տրամադրությամբ Իսաբեկյանի «Տանյան» իր վերջնական տարբերակով վստահաբար կարող է դրվել Հայրենական մեծ պատերազմի տարիներին և դրանից անմիջապես հետո ստեղծված նմանատիպ լավագույն աշխատանքների կողքին[7]:



[7] Աղասյան Ա., նշվ. աշխ., էջ 7:

*Տանյա, էսքիզ, 1947, կտավ, յուղաներկ*

*Պատերազմական տարիներին ու դրան հաջորդող տասնամյակում լեցուն է եղել Իսաբեկյանի ստեղծագործական կյանքը: Բազմաթիվ են էսքիզներն ու կտավները, որոնք անմիջականորեն անդրադառնում են Երկրորդ համաշխարհայինին. դրանց թվում են՝ «11-րդ բանակի մուտքը Երևան», «Կարմիրները հայկական գյուղում», «Առևանգում»: Այս տարիների ստեղծագործություններն այնքանով են հատկանշական, որ հայրենասիրական ու պատմական թեմաները հեղինակը շարունակում է նաև պատմական անցյալի մաս կազմող ռազմահեղափոխական, հայրենասիրական ու պաշտպանական այլ թեմատիկաներով, որոնց խմբին են պատկանում նկարչի վրձնած գեղարվեստական ու պատմական մեծ արժեք կազմող՝ «Դավիթ Բեկ», «Ավարայրի ճակատամարտը», «Պատասխան Հազկերտին», «Աշտիշատի ժողովը», «Նոյը որդիների հետ», «1915 թիվ» աշխատանքները:*

*Հատկանշական է, որ այս տարիներին Էդ. Իսաբեկյանն առաջիններից էր, որ անդրադառնում է 1915 թ. սարսափելի իրադարձություններին: Սրանով կարող ենք փաստել, որ հեղինակի մեջ հայրենասիրական ոգին այնքան հզոր ու հուժկու էր, որ Մեծ հայրենականի մարտական այդ ոգին հեղինակը վրձնով փոխանցում էր նաև Հայաստանի պատմության մաս կազմող այլ կարևորագույն անցքերի նույնպես: Ազգայինը Իսաբեկյանի արվեստում ազգագրական տարրերի դրսևորման սովորական նկարագրություն կամ թվարկում չէ: Այն առաջին հերթին պայմանավորված է գենետիկ մտածելակերպով, աշխարհայացքով, սկզբունքայնությամբ, ոգու ողջ էությամբ: Հետևելով վարպետի ստեղծագործությունների գաղափարական-թեմատիկ հետաքրքրությունների ակունքներին, համոզվում ենք, որ դրանց հիմքում, դեռևս վաղ շրջանից սկսած, անփոփոխ ու մնայուն են եղել ազգային-ազատագրական, դիցաբանական ու պատմական հերոսական դրամատիկ իրադարձությունները, ողջ ժողովրդի ճակատագրի համար վճռորոշ օրհասական պահերը:*

*«Պայքարը Էդուարդ Իսաբեկյանի արվեստի հիմնական էությունն է[8]«. ահա այսպես է բնութագրել նկարչին իր ատենախոսական աշխատությունում արվեստագետ Միհր Իսաբեկյանը:*

*Բազմաթիվ են գիտական ու հետազոտական աշխատանքներն Էդ. Իսաբեկյանի կյանքի ու արվեստի մասին, սակայն նկարչի՝ Մեծ հայրենականին անդրադարձած*

---

[8] **Իսաբեկյան Մ.**, *Էդվարդ Իսաբեկյանի գեղանկարչության ժանրային և ձևա-ոճական առանձնահատկությունները, ատենախոսություն, Ե., 2003, էջ 51:*

*ստեղծագործությունները մինչև օրս էլ ունեն որոշակի ուսումնասիրության կարիք, քանի որ դրանք իրոք շատ զգացական, բազմաբովանդակ ու պատմական խնդիրներ արծարծող գործեր են:*

## ТЕМА ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ В ТВОРЧЕСТВЕ ЭДУАРДА ИСАБЕКЯНА

**АРУТЮНЯН М. В.**

Резюме

Жизни и творчеству Эдуарда Исабекяна посвящены многочисленные научные и исследовательские работы, однако полотна художника, отражающие события Великой Отечественной войны, по сей день нуждаются в изучении. Кисти художника принадлежит ряд воистину глубоко эмоциональных, содержательных картин на исторические темы, в том числе полотна, посвященные Великой Отечественной войне.

## THE THEME OF THE GREAT PATRIOTIC WAR IN THE OEUVRE OF EDWARD ISABEKYAN

**M. HARUTYUNYAN**

Abstract

Multiple scholarly and research papers have been dedicated to the life and career of Edward Isabekyan, however, the artist’s works, reflecting the events of the Great Patriotic War, still await to be studied. The master created quite a few truly emotional, content-rich pictures, touching upon historical issues. The paper analyzes the artist’s works on patriotic themes of the war years, and those related with the Great Patriotic War in particular.